

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2021-1-1-Ա

ք. Երևան

15.04.2021թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2021 թվականի ապրիլի 15-ի նիստում քննարկեց 2020 թվականի հուլիսի 10-ին Վարդան Փենեսյանի կողմից ներկայացված՝ «Շարժունակ տեսախցիկով հիբրիդային շարժիչով ուղղահայաց թռիչքով թռչող սարք» անվանումով գյուտի (հայտ AM20190021) արտոնագիր տալն ամբողջությամբ մերժելու մասին փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Գյուտի հայտը մերժվել էր հետևյալ հիմքերով.

Գործակալությունը «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 54-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն որոշում է մերժել արտոնագիր տալը ամբողջությամբ, քանի որ ներկայացված հավակնության սահմանմամբ՝ հայտարկված գյուտը չի համապատասխանում Օրենքի 14-րդ հոդվածով սահմանված արտոնագրաունակության «արդյունաբերորեն կիրառելիության» պայմանին: Ըստ էության հայտի նյութերում նկարագրված է թռչող սարքի իրականացման չորս տարբերակ: Հայտի ներկայացված նյութերից ելնելով (նկարագրություն, գծագրեր), ինչպես նաև գյուտի հավակնության սահմանման մեջ առկա հատկանիշների համախմբությունից փորձաքննությունը եկել է այն եզրահանգման, որ հայտի նյութերում նկարագրված (բացահայտված) միջոցներով հնարավոր չէ գյուտն իրականացնել հայտում նշված նշանակությամբ և իրականացնել գյուտի խնդիրը՝ «ստեղծել շարժունակ ուղևորախցիկով, ուղղաձիգ վերելքով թռչող սարք, որն ունի թռիչքի ուղղության ուղղորդման առավելագույն պարզեցված մեխանիզմ»: Մասնավորապես՝ ներկայացված նյութերում բացահայտված չէ՝ - թե ելնելով թռչող սարքի պտուտակային մեխանիզմի կառուցվածքից (համառանցք մեխանիզմ, շրջափակված շրջանակով), ինչպես է առաջանում թռչող սարքի վերամբարձ ուժը, որը ապահովում է սարքի ուղղաձիգ վերելքը, և ինչ տեխնիկական միջոցներով է կառավարվում վերամբարձ ուժի մեծությունը; - թե ինչպես է իրականացվում սարքի պտուտակային մեխանիզմի անցումը ուղղաձիգ դիրքից դեպի

հորիզոնական դիրք (ինչ ուժերի ազդեցության հաշվին է իրականացվում այդ անցումը); - թե ինչ նպատակով են տեղադրված էլեկտրոնները, որոնք ելնելով տեխնիկայի մակարդակից պետք է հանդիսանան ինքնաթիռի կառավարման օրգան և ապահովեն ինքնաթիռի կողաթեքումը թռիչքի ընթացքում; - թե առաջարկված ինչ տեխնիկական միջոցներով է թռչող սարքն իրականացնում վերելքը, թռիչքի ուղղության փոփոխությունը, կողաթեքումը, իջեցումը և վայրէջքը առաջարկված տարբերակներում (նկ.1-նկ.13) և (նկ.14-նկ.19); - թե առաջարկված իրականացման բոլոր չորս տարբերակներում ինչպես է թռչող սարքը իրականացնում կայուն թռիչք (ինչ ուժերի ազդեցության հաշվին); - թե թռչող սարքի թևերի երկարությունների տարբերությունը ինչ խնդիր է լուծում (տես՝ նկ.1, նկ.3, նկ.4, նկ.5, նկ.7, նկ.11, նկ.13, նկ.16, նկ.19):

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ բավարարելու, փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչելու և գյուտի հայտով գործավարությունը շարունակելու վերաբերյալ, քանի որ հայտատուն պատրաստ էր անհրաժեշտ տեղեկությունները ներկայացնել փորձաքննությունը շարունակելու համար:

Փորձաքննության բաժնի պետը և փորձագետը համաձայն էին, որ հայտատուի բերած տեղեկությունները հնարավորություն կտան գյուտի փորձաքննությունը իրականացնելու համար:

Համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Բողոքն ամբողջությամբ բավարարել, փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչել և գյուտի (AM20190021) հայտով գործավարությունը շարունակել:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ

ՎԱՐՈՍ ՍԻՄՈՆՅԱՆ